

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 29

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

21.11. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյան - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Գ. Տոնոյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Մ. Սարգսյանը, Կ. Ադամյանը, Վ. Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ա/ Մարզում իրականացվելիք ՀՀ Կառավարության միջոցառումների և գերակա խնդիրների ծրագրի մասին
բ/ Մարզում պահանջարկ ունեցող ագրարային մասնագիտությունների և վերապատրաստման ծրագրեր իրականացնելու անհրաժեշտության մասին
գ/ՀՀ վարչապետի` Լոռու մարզ կատարվելիք այցի մասին
/Ա.Նալբանդյան/
2. 2017-2025թ.թ.նազմավարական ծրագրի կատարված աշխատանքների մասին
/Զեկ. Հ.Թադևոսյան/
3. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/ Զեկ. Ն.Սարգսյան/
4. ա/Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
բ/Համայնքներում բյուջեների կազմման ծրագրերի ընթացքի մասին
/ Զեկ. Հ.Պապոյան/
5. Համայնքների հնգամյա ծրագրերի կազմման ընթացքի մասին
/ Զեկ. Դ.Մանուչարյան/
6. Մարզում գյուղական տուրիզմի զարգացման ծրագրի նախապատրաստական աշխատանքների մասին
/ Զեկ. Հ.Մկրտչյան/
7. Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների , պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին
/ Զեկ. Գ.Հակոբյան/
8. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Հատուկ ուշադրություն դարձնել և աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ 5-ամյա ծրագրերի կազմման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Հսկողություն սահմանել համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման և համայնքների բյուջեների կազմման ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ. Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հետ քննարկել մարզում պահանջարկ ունեցող ագրարային մասնագիտությունների և վերապատրաստման ծրագրերի իրականացման աշխատանքները և ներկայացնել առաջարկություններ:

/ Ժամկետ՝ 1 շաբաթ/

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ իրականացնել և տեղեկացնել համայնքների ղեկավարներին մարզում գյուղական տուրիզմի զարգացման ծրագրերի իրականացման ուղղությամբ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզին տրամադրված աշնանացան ցորենի սերմացուների դիմաց հավաքագրման ենթակա գումարների գանձման ուղղությամբ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ս. Խեչումյանին՝

Հետևողական լինել և վերահսկել ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սննդի կազմակերպման գործընթացը:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Մ. Հովհաննիսյան

Հեռ. 0322 /2-31-99/